# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ գործուղման արդյունքների վերաբերյալ

**Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝** Սրբուհի Գալյան, Արդարադատության նախարար:

**Գործուղման վայրը և ժամկետները՝** Ամերիկայի Միացյալ Նահանգներ, 2024 թվականի դեկտեմբերի 7-ից 12-ը:

**Հրավիրող կողմը՝** Միջազգային այցելուների առաջնորդության ծրագրի պատասխանատու Էլիզաբեթ Բարրի:

**Գործուղման նպատակը՝** Մասնակցություն Միջազգային այցելուների առաջնորդության ծրագրին (ՄԱԱԾ):

**Քննարկված թեմաները՝** Թափանցիկության խթանմանը, կոռուպցիայի դեմ պայքարին և հաշվետվողականության ապահովմանն առնչվող հարցեր:

**Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը ԱՄՆ պետդեպարտամենտի միջազգային այցելուների առաջնորդության ծրագրին (ՄԱԱԾ) մասնակցելու համար ս.թ. դեկտեմբերի 7-ից 12-ը գտնվել է Ամերիկայի Միացյալ նահանգներում:

Հարկ է նշել, որ ՄԱԱԾ-ն ստեղծվել է ԱՄՆ նախագահի և Կոնգրեսի կողմից և նպատակ է հետապնդում ամրապնդելու կապերն ԱՄՆ քաղաքացիների և այլ պետություններից բարձրաստիճան քաղաքացիների հետ: ՄԱԱԾ-ի աշխատանքը միտված է ուսումնասիրել թափանցիկության խթանման, կոռուպցիայի դեմ պայքարի և հաշվետվողականության ապահովման լավագույն փորձը:

Այցի ընթացքում Արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը հանդիպումներ է ունեցել ԱՄՆ պետքարտուղարության թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի քարտուղարի օգնականի տեղակալ (Deputy Assistant Secretary) Բրենդոն Յոդերի, նույն բյուրոյի քարտուղարի օգնականի գլխավոր տեղակալ (Principal Deputy Assistant Secretary) Սմիթ Ուիլսոնի, ԱՄՆ հետաքննությունների դաշնային բյուրոյի ներկայացուցիչների և այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

Հանդիպումների ընթացքում Արդարադատության նախարարը ներկայացրել է վերջին տարիներին ՀՀ-ում արդարադատության ոլորտում, մասնավորապես՝ դատաիրավական, քրեական արդարադատության, մարդու իրավունքների պաշտպանության, կոռուպցիայի դեմ պայքարի, քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների ոլորտներում իրականացված բարեփոխումները, ինչպես նաև քննարկվել է առկա համագործակցության խորացմանն առնչվող և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Բացի այդ, Սրբուհի Գալյանն արժանացել է Anticorruption Champions Awards մրցանակին, որը նրան հանձնել է ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը: ԱՄՆ պետքարտուղարության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոն Սրբուհի Գալյանին 2024 թվականին ճանաչել է կոռուպցիայի դեմ պայքարի առաջատարներից՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը որպես կոռուպցիայի դեմ պայքարի կարևորագույն գործիք կիրառելու համար:

Միջազգային ճանաչում և վարկանիշ ունեցող այս մրցանակը փաստում է երկրի՝ կոռուպցիայի դեմ պայքարի հանձնառությունը, այն նպատակ ունի ճանաչել և աջակցել կոռուպցիայի դեմ պայքարող անձանց ու կազմակերպություններին: Այս մրցանակը տրվում է աշխարհի տարբեր երկրներում կոռուպցիայի դեմ պայքարող անձանց, ովքեր նշանակալի ավանդ ունեն հակակոռուպցիոն գործունեության մեջ:

**Արդարադատության նախարար** **Սրբուհի Գալյան**

**16.12.2024թ.**

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ արդարադատության նախարարություն

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը համարը Հայաստանի Հանրապետության վարչապետի 2024 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1094-Ա որոշում
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը Սրբուրի Գայյան, ՀՀ արդարադատության նախարար
4. Գործուղման վայրը Ամերիկայի Միացյալ Նահանգներ(Ֆլորիդա նահանգի Տամպա, Սանկտ Պետերբուրգ քաղաքներ և մայրաքաղաք Վաշինգտոն)
5. Գործուղման ժամկետները 2024թ. դեկտեմբերի 7-12-ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
*(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլ*
գործուղման ծախսերը կատարվելու են հրավիրող կողմի միջոցների հաշվին
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)
(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)
ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

| Ծախսի տեսակը | | Սրբուրի Գայյան | **Ընդամենը** (հազ. դրամ) |
|---|---|---|---|
| Ճանապար-հածախս | Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս) | | |
| | Ավիատոմսի արժեքը (դրամ) | | |
| Գիշերավարձ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | | |
| | Օրերի քանակը | | |

| | | | |
|---|---|---|---|
| | Ընդամենը (դրամ) | | |
| Օրապահիկ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | | |
| | Օրերի քանակը | | |
| | Ընդամենը (դրամ) | | |
| Այլ ծախսեր | Հակահամաճարակային նմուշառումների վճար | | |
| | ՊՊՍ սրահում սպասարկում | | |
| **Ընդամենը ծախսեր** (հազ. դրամ) | | 0 | 0 |

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱԲԻ
ՊԱԲՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ՝ ՏԻԳՐԱՆ ԱՐԵՅԱՆ